Աշխատանքի ծածկագիր 3769

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 26.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա.Ղուկասյանի
մասնակցությամբ անդամներ՝
Հ.Պետրոսյանի
Վ.Ենգիբարյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քրեական դատավարություն բաժնի 2-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 20-րդ, 29-րդ, 31-րդ, 32-րդ, 39-րդ հարցերը:

Քրեական դատավարության բաժին

Հարց 2

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ *այո, քանի որ դատավորը կաշկանդված չէ գործի մինչդատական վարույթում արված եզրահանգումներով,* մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը դ/-ն է, այն է՝ *ոչ, քանի որ դատավորն ունի կանխակալ կարծիք դատական քննության առարկայի (մեղադրանքի) վերաբերյալ,* քանի որ տվյալ դեպքում դատավորը բողոքի քննության արդյունքում անդրադարձել է անձին վերագրվող մեղադրանքի՝ խարդախության հանցակազմի հատկանիշներին, այդ իսկ պատճառով հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել ընդունելի:

Հարց 11

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ *մերժելու Ա-ի բողոքը, քանի որ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին նախաքննության մարմնի որոշումը որևէ կերպ չի կարող առնչվել նրա իրավունքներին ու օրինական շահերին:* Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 12

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ *իր նախընտրած ցանկացած լեզվով, իսկ ռուսերեն լեզվով հանդես գալու դեպքում դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ, երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը*, մինչդեռ ճիշտ պատասխանն է գ/-ն, այն է՝ *իր նախընտրած ցանկացած լեզվով, սակայն ռուսերենով հանդես գալու դեպքում պարտավոր է իր հաշվին ապահովել թարգմանությունը, քանի որ տիրապետում է հայերենին,* քանի որ խնդրի նկարագրությունից երևում է, որ Ա.Պետրոսյանը տիրապետում է հայերեն լեզվին և ռուսերեն լեզվով հանդես գալը եղել է իր ցանկությունը, հետևաբար ռուսերեն լեզվով հանդես գալու դեպքում պարտավոր է իր հաշվին ապահովել թարգմանությունը:

Հարց 13

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ *բոլոր պատասխաններն էլ ճիշտ են,* մինչդեռ ճիշտ պատասխանն է ա/-ն, այն է՝ *հայցը թողնել առանց քննության՝ իրավունք վերապահելով քաղաքացիական հայց հարուցել քաղաքացիական դատավարության կարգով,* քանի որ բոլոր առաջարկված պատասխանների մեջ առկա է նաև հայցով կողմերի հաշտության համաձայնության հաստատում, որպիսի լիազորություն տվյալ դեպքում դատարանը չունի:

Հարց 20

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ *մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում օրենսգրքով սահմանված պահանջներին*: Քանի որ մեղադրական եզրակացութունը դատախազին վերադարձնելու դատավարական ընթացակարգ չկա, հետևաբար

Հանձնաժողովը փաստում է, որ նշված առաջադրանքում ճիշտ պատասխանը բացակայում է, այդ իսկ պատճառով ճիշտ պատասխանն է դ/ տարբերակը:

Հարց 29

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ *անհրաժեշտություն է առաջացել պարզելու մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից երևում է, որ քննիչը, համաձայն չլինելով փորձագետի եզրակացության հետ՝ վերջինի ոչ լրիվ լինելու պատճառաբանությամբ, **կարող է** նշանակել լրացուցիչ փորձաքննություն, հետևաբար <<կարող է>> **եզրույթը չի կարող համարվել <<պարտադիր>>:** Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 31

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ *գործն ուղարկվում է ըստ ընդդատության, իսկ գործը վարույթ ընդունած դատարանը որոշում կայացնում դատաքննությունը վերսկսելու մասին,* մինչդեռ ճիշտ պատասխանն է ա/-ն, այն է՝ *գործի կատարված դատական քննությունը չեղյալ է համարվում, և գործն ուղարկվում է ըստ ընդդատության,* քանի որ դատական քննությունը ոչ թե պետք է վերսկսվի, այլ պետք է որոշում կայացնի գործը դատական քննության նշանակելու մասին:

Հարց 32

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ *ճիշտ պատասխանը բացակայում է,* մինչդեռ տվյալ առաջադրանքում ճիշտ պատասխանն առկա է, և հետևաբար հավակնորդի կողմից նշված պատասխանը չի կարող դիտվել, որպես ճիշտ պատասխան:

Հարց 39

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ *ոչ, քանի որ օրենքով առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման բացառապես այն դեպքում, երբ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում (քր. դատ. օր-ի 309.1 հոդվածի 1-ին մաս):* Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ

հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 3769 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական դատավարության բաժնի 11-րդ, 29-րդ և 39-րդ հարցերի պատասխանը գնահատել յուրաքանչյուրը 1 միավոր, ընդհանուր 3 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վ.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ